

Ս. Ժողովը նաեւ ատեն ատեն հայ կաթողիկեայ եպիսկոպոսներ կը ղրկէր, որոնք նոյն տեղերը կը շրջէին, կը բնակէին, ի ծածուկ եւ հակառակ հալածանաց՝ նոր անդամներ կը վաստրկէին. հիները կը հաստատէին եւ ամէնուն հոգեւոր պէտքերը կը հոգային: Այսպէս ծանօթներէն մէկ քանին յիշենք: Վարդան Վ. Յունանեան, աշակերտ Գպրատան, 1675ին Արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ՝ իբրեւ օգնական Լէմպերկի Նիկ. Թորոսեպիսկոպոսին, եւ Ս. Ժողովոյ հրամանաւ անմիջապէս ճամբայ ելաւ, ամբողջ հայաբնակ գաւառները շրջեցաւ տասը տարի, եւ 1785ին վերադարձաւ Լէմպերկ: Մելքոն Վ. Գապասեան, աշակերտ Գպրատան, Մերտինի առաջին հայ կաթողիկեայ Արքեպիսկոպոսը, Ս. Ժողովոյ հրամանաւ 1685 — 7 գրեթէ ամբողջ Հայաստան շրջեցաւ քարոզութեամբ: Աբրահամ Վ. Արծիւեան կամ Ծուվիղեան որ 1710ին Բերիոյ Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, քիչ ետքը քարոզութեամբ շրջեցաւ Գաղատիա, Կեսարիա, Տրապիզոն եւ ի Կ.Պոլիս, ուր բանտարկուեցաւ 1714ին: Գրիգոր Վ. Քիւփէլեան, որ Լեբանտու Միքայէլ Պետրոս Գ. կաթողիկոսէն († 1780) Ատանայի Արքեպ. ձեռնադրուած էր, Ս. Ժողովոյ հրամանաւ մինչեւ 1788 ամբողջ Մեծ Հայք շրջեցաւ, քահանաներ ձեռնադրեց, եւ այլն:

Այսպիսի միսիոնար մըն էր նաեւ Սարգիս Արքեպիսկոպոս, որ իւր արժանաւոր մեծ համբաւովը կոչուած էր Կ. Պոլսոյ Հայոց մէջ կա-